ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<<28>> օգոստոս 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 200-1-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս՝ վերանայելով ֆիզիկական անձ Արամ Դավթի Աթանեսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 4453/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ ֆիզիկական անձ Արամ Դավթի Աթանեսյանի (Հասցե՝ Երևան Էրեբունի փող., 26 շենք 9 բն., ՀՎՀՀ՝ 52194128, ՀԾՀ՝ 1101920378) չկատարված հարկային պարտավորությունը 21.07.2022թ. դրությամբ կազմել է 171.228 դրամ, որից հարկ՝ 165.150 տույժ՝ 6.078 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ ֆիզիկական անձի չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 30.03.2023թ. կայացվել է թիվ 200-Ա որոշումը:

Ֆիզիկական անձ Արամ Դավթի Աթանեսյանի վերաբերյալ կայացված թիվ 200-Ա որոշման մեջ թույլ է տրվել տեխնիկական վրիպակ. համաձայն որի որպես պարտավորությունների առաջացման հիմք նշվել է 21.07.2022թ. տարեթիվը, սակայն պետք է նշվեր՝ 20.04.2022թ.:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 30.03.2023 թվականի թիվ 200-Ա չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման «Որոշեցի» մասի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2022թ	165.150	6.078		171.228	պետական բյուջե	900008000490

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատ.՝ ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի գլխավոր մասնագետ, Ս. Ալեքսանյան, Հեռ. 010 30 91 91 /91-31/